

ԵՊԲՀ ՔՈԼԵԶԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
«ԿԵՆՍԱԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՔՆՆԱԿԱՆ
ՏՈՄՍԻ ՕՐԻՆԱԿ

1. Ինչի՞ց է առաջանում միջհյուսվածքային հեղուկը.

- 1.արյան պլազմայից
- 2.արյան մեջ պարունակվող ջրից
3. ավշից
4. արյան ձևավոր տարրերից

2. Ի՞նչ հիվանդություն է առաջանում վահանագեղձի թիրոքսին հորմոնի ավելացումից.

- 1.գաճաճություն
- 2.լորձայտուց
- 3.բազեդովյան հիվանդություն
- 4.ճարպակալում

3.Մարդու շնչառական կենտրոնը գտնվում է.

- 1.մեծ կիսագնդի կեղևում
- 2.ուղեղիկում
- 3.ողնուղեղում
- 4.երկարավուն ուղեղում

4. Ո՞ր մկանային հյուսվածքն է կծկվում ոչ կամային.

- 1.հարթ և միջաձիգ գոլավոր մկանը
- 2.միջաձիգ գոլավոր մկանը
- 3.հարթ մկանը և սրտամկանը
- 4.միջաձիգ գոլավոր մկանը և սրտամկանը

5. Սպիտակուցները ֆերմենտների ազդեցությամբ մարսողական համակարգերում ճեղքվում են.

1. գլիցերինի և ճարպաթթուների
- 2.ամինաթթուների և գլյուկոզի
- 3.գլյուկոզի
- 4.ամինաթթուների

6. Մարդու ձեռքը կազմված է.

- 1.նախադաստակից և մատոսկրից
- 2.նախադաստակից, դաստակից և մատոսկրերից

3. դաստակից և մատուկներից
4. նախադաստակից և դաստակից

7. Ի՞նչ է շիճուկը.

1. պլազման է առանց ձևավոր տարրերի
2. ֆիբրինոգենից զուրկ պլազման է
3. պլազման է առանց էրիթրոցիտների
4. պլազման է առանց սպիտակուցների

8. Մարդու կրծքավանդակը որովայնի խոռոչից բաժանվում է.

1. ստամոքսով
2. թոքամզով
3. ստոծանիով
4. միջկողային մկաններով

9. Արյան պաշտպանական հատկությանը չի վերաբերվում.

1. մակարդումը
2. իմունիտետը
3. ֆագոցիտոզը
4. թթվածնի փոխադրումը

10. Ինքնավար նյարդային համակարգը.

1. նյարդավորում է մկանները
2. նյարդավորում է մաշկը և մկանները
3. կարգավորում է ներքին օրգանների աշխատանքը
4. կարգավորում է ներքին օրգանների և մկանների աշխատանքը

11. Աչքի դեղին բծում կենտրոնացված են.

1. սրվակները
2. ցուպիկները
3. արյան մազանոթները
4. նյարդային բջիջները

12. Ի՞նչ են ալելային գեները.

1. մի քանի հատկանիշների զարգացումը պայմանավորող գեներն են.
2. հոմոլոգ քրոմոսոմների նույն լոկուսում գտնվող և մեկ հատկանիշի ալտերնատիվ զարգացումը պայմանավորող գեներն են
3. տարբեր քրոմոսոմներում գտնվող և մեկ հատկանիշի զարգացումը պայմանավորող գեներն են
4. ռեցեսիվ հատկանիշի զարգացումը ճնշող գեներ են

13. Բջջում ի՞նչ ֆունկցիա են կատարում լիպիդները.

- 1.կառուցողական և պաշտպանական ֆունկցիաներ
- 2.էներգետիկ և կառուցողական ֆունկցիաներ
- 3.պաշտպանական և ջերմակարգավորիչ ֆունկցիաներ
- 4.նշված բոլոր ֆունկցիաները

14. Ի՞նչ ֆունկցիա է կատարում ի-ՌՆԹ-ն բջջում:

- 1.ամինաթթուները փոխադրում է դեպի սպիտակուցի սինթեզի վայր
- 2.մատրիցա է ո-ՌՆԹ-ի սինթեզի համար
- 3.ԴՆԹ-ի մոլեկուլից գենետիկական տեղեկատվությունը փոխանցում է ռիբոսոմներ
- 4.ճիշտ պատասխանը բացակայում է

15. Մատրիցայի սինթեզի ռեակցիաներ են.

- 1.տրանսլյացիան
- 2.տրանսկրիպցիան
- 3.տրանսկրիպցիան և տրանսլյացիան
- 4.ճիշտ պատասխանը բացակայում է

16. Քանի՞ տիպի գամետներ կառաջացնի AaBBCcDd գենոտիպով առանձնյակը, եթե նշված գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում.

- 1.4
- 2.8
- 3.12
- 4.14

17. Ի՞նչ է տրանսլյացիան.

- 1.գենետիկական ինֆորմացիայի փոխանակում է
- 2.ԴՆԹ-ի մոլեկուլում առաջացած մատրիցա է
- 3.ի-ՌՆԹ-ի մատրիցայի հիման վրա ռիբոսոմներում սպիտակուցի սինթեզի պրոցեսն է
- 4.ԴՆԹ-ի մոլեկուլից գենետիկական ինֆորմացիայի փոխանցումն է ի-ՌՆԹ-ն

18. Պարզ ածխաջրերից է.

- 1.գլյուկազոնը
- 2.ֆրուկտոզը
- 3.օսլան
- 4.թաղանթանյութը

19. Մերնդի համար ավելի շատ վտանգավոր են այն մուտացիաները, որոնք առաջացել են.

1. մկանային բջիջներում
2. սեռական բջիջներում
3. նյարդային բջիջներում
4. էպիթելային բջիջներում

20. Միտոզի հետևանքով մարմնական բջիջներում քրոմոսոմների թիվը.

1. կրկնակի պակասում է
2. կրկնակի ավելանում է
3. մնում է անփոփոխ
4. ճիշտ պատասխանը բացակայում է

21. Ֆենոտիպում չարտահայտված հատկանիշը կոչվում է.

1. ռեցեսիվ
2. դոմինանտ
3. հետերոզիգոտ
4. հոմոզիգոտ

22. Ո՞ր երակներով է հոսում զարկերակային արյունը (մարդու օրինակով).

1. ատորին սիներակով
2. թոքային երակներով
3. վերին սիներակով
4. ճիշտ պատասխանը բացակայում է

23. Որտե՞ղ է առաջանում ածխաթթու գազը.

1. հյուսվածքային հեղուկում
2. թոքերում
3. բջիջներում
4. էրիթրոցիտներում

24. Որտե՞ղ են գտնվում լսողական ընկալիչները.

1. թմբկաթաղանթի վրա
2. խխունջի մեջ
3. միջին ականջում
4. լսողական արտաքին անցքի մեջ

25. Որտե՞ղ է տեղի ունենում սպիտակուցների ճեղքումը մարսողական համակարգում.

1. ենթաստամոքսային գեղձում
2. բերանի խոռոչում

3.ստամոքսում և բարակ աղիներում

4.հաստ աղիում

26. Արյան մեջ գլյուկոզի քանակի ավելացման դեպքում այն պահեստավորվում է.

1.օսլայի ձևով

2.գլիկոգենի ձևով

3.խոլեստերինի ձևով

4.օսլայի և խոլեստերինի ձևով

27. Ողը կազմված է.

1.աղեղից և նրանից դուրս եկող էլուստներից

2.մարմնից և էլուստներից

3.աղեղից և մարմնից

4.մարմնից, աղեղից և նրանից դուրս եկող էլուստներից

28.Ենթաստամոքսային և սեռական գեղձերը.

1.ներգատիչ գեղձեր են

2.խառը գեղձեր են

3.արտազատող գեղձեր են

4.մարսողական գեղձեր են

29. Ի՞նչ է մարդու ողնաշարի կորուսյունների առաջացման պատճառը.

1.ծանր աշխատանքային գործունեությունը

2.ուղղաձիգ քայլվածքը

3.սպորտով զբաղվելը

4.ճիշտ պատասխանը բացակայում է

30.Արյունը.

1.էպիթելային հյուսվածք է

2.շարակցական հյուսվածք է

3.նյարդային հյուսվածք է

4.ճիշտ պատասխանը բացակայում է

31.Ներդիր նեյրոնները գտնվում են.

1.նյարդային հանգույցներում

2.ծայրամասային նյարդային համակարգում

3.կենտրոնական նյարդային համակարգում

4.ճիշտ պատասխանը բացակայում է

32.Ներդիր նեյրոնները գտնվում են.

նյարդային հանգույցներում

2. ծայրամասային նյարդային համակարգում

3. կենտրոնական նյարդային համակարգում

4. ճիշտ պատասխանը բացակայում է

33. Դիմախաղի մկանները.

1. երկու ծայրերով ամրացված են ոսկրերին

2. երկու ծայրերով ամրացված են մաշկին

3. մեկ ծայրով ամրացված են ոսկրերին, իսկ մյուսով՝ մաշկին

4. մեկ ծայրով ամրացված են ոսկրերին, իսկ մյուսով ազատ են

34. Ի՞նչ է գենը.

1. նուկլեինաթթուների մանուկներ է

2. ի-ՌՆԹ-ի հատված է

3. ԴՆԹ-ի այն հատվածն է, որը տեղեկատվություն է պարունակում մեկ սպիտակուցի առաջնային կառուցվածքի մասին

4. ԴՆԹ-ի մոլեկուլի մեկ շղթան է

35. Ի՞նչ ֆունկցիա է կատարում արտաքին պլազմային թաղանթը.

1. ածխաջրերի սինթեզ

2. սպիտակուցի սինթեզ

3. կապ է հաստատում բջջի օրգանոիդների միջև

4. սահմանազատում է բջիջն արտաքին միջավայրից և պայմանավորում է նյութերի թափանցելիությունը

36. Բազմաշաքարների մանուկներն են.

1. միաշաքարները

2. ամինաթթուները

3. սպիաբոզը

4. նուկլեոտիդները

37. Ի՞նչ ֆունկցիա է կատարում փ-ՌՆԹ-ն բջջում.

1. ԴՆԹ-ի մոլեկուլից գենետիկական տեղեկատվությունը փոխանցում է ռիբոսոմներ

2. ամինաթթուները փոխանցում է ռիբոսոմներ

3. սպիտակուցի սինթեզի մատրիցա է

4. ճիշտ պատասխանը բացակայում է

38. Ռիբոզը մտնում է.

1. ԴՆԹ-ի բաղադրության մեջ

2. ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի բաղադրության մեջ

3. սպիտակուցի բաղադրության մեջ

4. ԱԵՖ-ի սինթեզի համար

39. Առանձնյակի գենոտիպը որոշելու համար կատարում են.

1. միահիբրիդ խաչասերում

2. երկհիբրիդ խաչասերում

3. բազմահիբրիդ խաչասերում

4. վերլուծող խաչասերում

40. Մոդիֆիկացիոն փոփոխականությունը ի տարբերություն մուտացիոն փոփոխականության.

1. անհատական է

2. արտահայտվում է տեսակի բոլոր առանձնյակներում

3. գեների հետ կապված փոփոխականություն է

4. ժառանգական բնույթ է կրում

41. Ջրի մոլեկուլները բջիջ են թափանցում

1. հատուկ սպիտակուցների մասնակցությամբ

2. ֆագոցիտոզի ճանապարհով

3. ԱԵՖ-ի էներգիայի հաշվին

4. օսմոսի օրինաչափությունների համաձայն

42. Մեյոզի արդյունքում մեկ մայրական բջիջ ձևավորվում է.

1. 2 ձվաբջիջ

2. 8 ձվաբջիջ

3. 1 ձվաբջիջ

4. 4 ձվաբջիջ

43. Ո՞ր բջիջներն են ավելի զգայուն թթվածնի պակասի նկատմամբ.

1. երիկամի և միզապարկի

2. ողնուղեղի

3. ներզատիչ գեղձերի

4. գլխուղեղի

44. Ինչի՞ է հանգեցնում վաղ մանկական հասակում վահանագեղձի ֆունկցիայի անկումը.

1. նյութափոխանակության ակտիվացման

2. կասեցվում է աճը, խախտվում են մարմնի համաչափությունը, սեռական և հոգեկան զարգացումը

3. ակտիվացնում է արյան շրջանառությունը

4.խախտվում է շաքարափոխանակությունը

45. Ի՞նչ ֆունկցիա են կատարում ֆերմենտները.

1. էներգիայի աղբյուր են
2. փոխադրում են ածխաթթու գազ և թթվածին
3. արագացնում են քիմիական ռեակցիաները
4. չեն մասնակցում քիմիական ռեակցիաներին

46. Ոսկրերի աճը հաստությամբ պայմանավորված է.

1. հոծ նյութով
2. շրջոսկրի ներքին շերտի բջիջների բաժանումով
3. սպունգանման նյութով
4. արյան անոթներով և սպունգանման նյութով

47. Ռդնաշարի ո՞ր հատվածում է ավարտվում ողնուղեղը.

1. գոտկային II-III ողերի սահմանում
2. սրբանային I-II ողերի սահմանում
3. գոտկային I-II ողերի սահմանում
4. գոտկային III-IV ողերի սահմանում

48. Ինչն՞ է պայմանավորված ձայնի բարձրությունը.

1. բերանի խոռոչի կառուցվածքային առանձնահատկությամբ
2. վահանաճարի մեծությամբ
3. ձայնալարերի երկարությամբ և հաստությամբ
4. բերանում լեզվի դիրքով

49. Հասուն մարդու օրգանիզմում կարմիր ոսկրածուծը գտնվում է.

1. սպունգանման նյութում
2. բոլոր ոսկրերում
3. սպունգանման և տափակ ոսկրերում
4. տափակ ոսկրերում

50. Մոդիֆիկացիոն փոփոխականությունը ի տարբերություն մուտացիոն փոփոխականության.

1. անհատական է
2. արտահայտվում է տեսակի բոլոր առանձնյակներում
3. գեների հետ կապված փոփոխականություն է
4. ժառանգական բնույթ է կրում